

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2009թ. ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵԽՆԱԾԻՆ, ՏԱՐԵՐԱՅԻՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԿԵՆՑԱԴԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ


ԵՐԵՎԱՆ 2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2009Թ. ԱՌԱՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱԴԱՑԱԾ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետությունում 2009 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում առաջացել է 5312 արտակարգ դեպք (այսուհետ՝ ԱԴ), որից 2709՝ տեխնածին (51%-ը), 356՝ տարերային (6.7%-ը) և 2247՝ սոցիալ-կենցաղային (42.3%-ը) բնույթի (2008թ.՝ 5953 ԱԴ, որից 3620՝ տեխնածին (60.8%-ը), 233՝ տարերային (3.9%-ը) և 2100՝ սոցիալ-կենցաղային (35.3%-ը), 2007թ.՝ համապատասխանաբար 3264 (56.3%), 354 (6.1%) և 2184 (37.6%) դեպք): Հաշվետու ժամանակահատվածը աչքի ընկավ աննախադեպ նվազումով թե՛ 2008 (641-ով, 10.8%-ով), թե՛ 2007թ. (490-ով, 8.4%-ով) համեմատությամբ:

Թեև 2007-2008թթ. համեմատությամբ տեխնածին ԱԴ-ների թվաքանակում գրանցվեց զգալի նվազում (համապատ.՝ 555-ով, 17%-ով և 911-ով, 25.1%-ով), տարերային և հատկապես կտրուկ սոցիալ-կենցաղային ԱԴ-ների դասերում գրանցվեց աճ (համապատ. 2-ով և 23-ով՝ տարերային, 63-ով և 147-ով՝ սոցիալ-կենցաղային ԱԴ-ների դասում): Ընդ որում, հենց վերջիններիս դասում էր գրանցվել նվազում 2008թ.՝ 2007թ. համեմատությամբ:

2009թ. ինն ամիսների ընթացքում հանրապետությունում ԱԴ-ների բաշխվածությունն ըստ բնույթի բերված է նկար 1-ում, 2007-2009թթ. համեմատական գծապատկերն ըստ բնույթի՝ նկար 2-ում:



Նկար 1.




Նկար 2.

2009թ. հաշվետու ժամանակահատվածում երկրորդ և երրորդ եռամսյակներն աչքի ընկան ԱԴ-ների հերթական նվազումով ինչպես 2007, այնպես էլ 2008թ. համեմատությամբ: Նվազումով՝ 2008թ. (89-ով) և աճով՝ 2007թ. (58-ով) համեմատությամբ հանդես եկավ 2009թ. առաջին եռամսյակը: Ուշագրավ ցուցանիշներով հանդես եկավ հաշվետու ժամանակահատվածի երրորդ եռամսյակը, որի ընթացքում գրանցվեց միանգամից երեք ռեկորդ. նվազագույն ցուցանիշ գրանցվեց տեխնածին և առավելագույն՝ տարերային ԱԴ-ների 3-րդ եռամսյակների համեմատությամբ և առավելագույն դիտարկվող ժամանակահատվածում՝ սոցիալ-կենցաղային ԱԴ-ների դասերում:

Ընդհանուր առմամբ, ըստ ԱԴ դասերի, բաշխվածության պատկերը եռամսյակների կտրվածքով չփոփոխվեց (թեև տեխնածին ԱԴ-ների կտրուկ նվազումը այս տարվա հաշվետու ժամանակահատվածում էապես փոխեց նախորդ տարիներին գրանցվող վիճակագրական պատկերը). տեխնածին և սոցիալ-կենցաղային ԱԴ-ների դասում երկրորդ եռամսյակում աճ գրանցվեց առաջինի, երրորդում՝ երկրորդի նկատմամբ (բացառությամբ 2008թ. 2-րդ եռամսյակը), իսկ տարերայինների դասում՝ առավելագույն ցուցանիշ գրանցվեց երկրորդ եռամսյակում՝ նվազման միտում ցուցաբերելով երրորդում:

2007-2009թթ. ԱԴ-ների համեմատական զծապատկերն ըստ եռամսյակների պատկերված է նկար 3-ում, համեմատական տվյալներն ըստ եռամսյակների՝ աղյուսակ 1-ում:



Նկար 3.

Աղյուսակ 1.


ԱԴ անվանումը	2009թ.			2008թ.			2007թ.		
	I	II	III	I	II	III	I	II	III
Տեխնածին	779	866	1064	1124	1039	1457	709	979	1576
Տարերային	70	150	136	81	98	54	58	192	104
Սոցիալ-կենցաղային	625	776	846	658	672	770	649	772	763
Ընդամենը	1474	1792	2046	1863	1809	2281	1416	1943	2443

ԱԴ-ների հետևանքով տարվա ինն ամիսների ընթացքում զոհվել է 343, տուժել՝ 4233 մարդ (2008թ.՝ զոհվել է 401, տուժել՝ 4919, 2007թ.՝ համապ. 381 և 4426): 253-ը զոհվել են (զոհերի մոտ 73.8%-ը), 1998-ը (տուժածների 47.2%-ը)՝ տուժել՝ տեխնածին, 90-ը զոհվել են (զոհերի մոտ 26.2%-ը), 2233-ը տուժել (զոհերի մոտ 52.7%-ը)՝ սոցիալ-կենցաղային և 2-ը տուժել՝ տարերային ԱԴ-ներից:


Եթե նախորդ տարիներին դիտարկվող ժամանակահատվածում զոհերի գերակշիռ մեծամասնությունը բաժին էր ընկնում ճանապարհատրանսպորտային պատահարներին (այսուհետ՝ ՃՏՊ)՝ ցուցանիշների հերթական և աստիճանական աճով (2007-2008թթ. ինն ամիսների ընթացքում զոհվեց համապ. 255 և 285 (զոհերի մոտ 67 և 71%-ը), տուժեց՝ 1981 և 2606 մարդ (տուժածների մոտ 44.7 և 53%-ը), ապա այս տարի նշված դասում գրանցվեց ցուցանիշների կտրուկ նվազում և՛ 2008, և 2007թ. համեմատությամբ (համապատ. 53 և 23 դեպքերով): Ջոհերի նվազում 2007-2008թթ. համեմատությամբ գրանցվեց նաև հրդեհների մասնաբաժնում (համապատ.՝ 2-ով և 6-ով): Մեկ դեպքով նվազում գրանցվեց 2008թ. և ցուցանիշները կրկնապատկվեցին 2007թ. համեմատությամբ՝ պայթյունների դասում: Ջոհեր չգրանցվեցին փլուզումների, համաճարակների, զինամթերքի հայտնաբերման, պայթուցիկ սարքերի տեղադրման ահազանգերի և տարերային ԱԴ-ների դասերում:

Ընդհանուր առմամբ, 2007-2008թթ. համեմատությամբ 2009թ. ինն ամիսների ընթացքում գրանցվեց նվազում և՛ զոհերի, և՛ տուժածների թվաքանակում, որը զոհերի մասնաբաժնում արտահայտվեց համապատասխանաբար 38 (մոտ 10%-ով) և 58 (մոտ 14.5%-ով), տուժածների՝ 193 (մոտ 4.4%-ով) և 686 (մոտ 14%-ով):


2009թ. ինն ամիսների ընթացքում զոհերի և տուժածների փոխհարաբերությունը բերված է նկար 4-ում, 2007-2009թթ. համեմատական գծապատկերները՝ նկար 5 - ում:



Նկար 4.




Նկար 5.



Նկար 6.

Ինչպես և նախորդ տարիներին այնպես էլ 2009թ. ինն ամիսների ընթացքում ԱԴ-ների մասնաբաժնային բաշխվածության պատկերում էական փոփոխություններ չգրանցվեցին. առավելագույն մասնաբաժիններով կրկին հանդես եկան թունավորումները, ճանապարհատրանսպորտային պատահարներն (այսուհետ՝ ՃՏՊ) ու հրդեհները, միայն այն տարբերությամբ, որ հրդեհները զիջեցին տոկոսները թունավորումներին և ՃՏՊ-ներին: Վերոհիշյալ եռյակին այս տարի էլ բաժին ընկավ «բլիթի» գերակշռող մեծամասնությունը՝ մոտ զբաղեցրեց «բլիթի» 91%-ը, 4835 դեպքով (2008թ.՝ 5593 դեպք, 94%-ը, 2007թ.՝ 91%-ը, 5275 դեպք):

2009թ. ինն ամիսների ընթացքում ԱԴ-ների բաշխվածությունն ըստ բնույթի պատկերված է նկ. 7-ում: 2007-2009թթ. համեմատական տվյալները պատկերված են աղյուսակ 2-ում:



Նկար 7.

Աղյուսակ 2.

Գ/հ	ԱԴ անվանումը	2009/9			2008/9			2007/9		
		ԱԴ քանակը	Ձև.	Տուժ.	ԱԴ քանակը	Ձև.	Տուժ.	ԱԴ քանակը	Ձև.	Տուժ.
1	Հրդեհներ	1253	15	16	1980	21	49	1790	17	34
2	Պայթյուններ	11	6	17	26	7	19	20	3	19
3	Փլուզումներ	32	0	0	24	4	6	67	4	34
4	ԵՏՊ-ներ	1413	232	1965	1590	285	2606	1387	255	1981
5	Ջրհեղեղներ	37	0	0	15	0	0	84	0	0
6	Սելավներ	19	0	0	5	0	0	38	0	0
7	Փլվածքներ	3	0	0	7	1	5	3	0	0
8	Քարաթափումներ	5	0	0	2	0	1	2	0	0
9	Սողանքներ	7	0	0	4	0	0	7	0	0
10	Ուժեղ քամիներ	52	0	2	44	0	0	16	0	0
11	Ձնաբքեր	6	0	0	24	0	0	13	0	2
12	Տեղատարափ անձրևներ	30	0	0	7	0	0	19	0	0
13	Ուժեղ կարկուտ	58	0	0	33	0	1	43	0	0
14	Ցրտահարում	2	0	0	2	0	0	0	0	0
15	Կայծակահարում	2	0	0	1	1	0	1	1	0
16	Երկրաշարժեր	135	0	0	89	0	0	128	0	0
17	Թունավորումներ	2169	24	2210	2023	22	2207	2098	36	2329
18	Դիակի հայտնաբերում	47	47	*	41	41	*	47	47	*
19	Ջրահեղձում	22	19	8	21	19	6	18	18	2
20	Պայթուցիկ սարքերի տեղադրման ահազանգ	2	0	0	1	0	0	6	0	0
21	Ձենք, զինամթերքի հայտնաբերում	3	0	0	5	0	0	6	0	0
22	Համաճարակներ	4	0	15	9	0	19	9	0	25
Ընդամենը		5312	343	4233	5953	401	4919	5802	381	4426